

# Արծվաշենի 12-ը...

Մինչ իրենց մատաղ կյանքի վերջին մարտը, նրանք շահել էին փոքր ու մեծ ճակատամարտեր, իրենց ձեռքում էին պահել Տաուշի, Կրասնոսելսկի ռազմական տեսակետից մեծ կարևորություն ներկայացնող բարձունքները, թշնամուն հետ շպրտել Օրջոնիկիձե և Վահան գյուղերի տարածքներից: Եվ սակայն վճռական մարտն առջևում էր: Վանաձորի 016 մոտոհրաձգային դեսանտային գնդի տղաներից շատերի համար անցյալ օգոստոսի 4-ից 8-ը փառքի ու անմահության ճանապարհի սկիզբն էր: Նրանցից 12-ը դարձան հավերժի ճամփորդներ: Իրենց հրամանատարին՝ մայոր Էդվարդ Ավետիսյանին, տղաները կես խոսքից էին հասկանում: Չափազանց կարճ ժամկետում անհրաժեշտ էր կազմակերպել արծվաշենցիների դուրսբերումը, փրկել 4500 կյանք:

Հեշտ է ասել. մինչև ատամները զինված 800 օմոնական, հրասայլեր և այլ հզոր տեխնիկաներ, իսկ նրանց դիմաց ընդամենը 12 հայորդի զինվոր՝ իրենց մարտական տեխնիկայով, զինամթերքով: 3 ժամ տևած օրհասական մարտից առաջ, չորս օրերի ընթացքում, այնուամենայնիվ, նրանց հաջողվեց 4500 արծվաշենցիների դուրսբերումը մարտադաշտի վերածված և կղզիացված գյուղից:

Այո, տղաների վերջին մարտը օգոստոսի 8-ին էր և տևեց երեք ժամ: Դիմահար եկող թշնամին հնձվում էր հունիսյան խոտի նման: Շուտով թշնամին փոխեց իր հարձակման տակտիկան: Տղաները չնկատեցին, թե ինչպես երկու տանկ դարանակալ գողի նման խուժեցին թիկունքից և կասեցրին տղաների գրոհը. նրանք ընկան վերջին փամփուշտը դատարկած...

Այսօր այս 12 արծիվների շիրիմներն ամփոփվում են Եռաբլրի գերեզմանոցում. շուրջ երկու ամիս հետո՝ հոկտեմբերի 5-ին միայն հաջողվեց կատարել դիակների փոխանակումը: 12 այս արծիվներից միայն երկուսը՝ գնդի հրամանատարի տեղակալ, թիկունքի գծով մայոր Էդվարդ Ավետիսյանն էր 31 տարեկան և լեյտենանտ Վոլոդյա Դարբինյանը՝ 23 տարեկան, մնացած 10-ի 20-ը դեռ չէր բոլորել:

Անուն առ անուն հիշենք նրանց՝ Արծվաշենի քաջերին, խոնարհվենք նրանց եղբայրական շիրմի առաջ.

**Անանիա Վարդանի Սմբատյան**

**Դավիթ Արամայիսի Միքայելյան**

**Մխիթար Գևորգի Չիլինգարյան**

**Տիգրան Գրիգորի Թովմասյան**

**Սուրեն Լյուդվիգի Եղիազարյան**

**Հարություն Վուրանգյուլի Աբրահամյան**

**Կարեն Սերյոժայի Մնացականյան**

**Ժորիկ Ալբերտի Հակոբյան**

**Կամո Ռոբերտի Սարիբեկյան**

**Արմեն Վոլոդյայի Մակարյան:**

Նրանց մասին դեռ լեգենդներ են հյուսվելու, որովհետև տակավին ողջ, արդեն լեգենդ էին, նրանց անուններով են կոչելու դպրոցներ ու փողոցներ, մարտական ջոկատներ: